Հաստատում եմ ինստիտուտի
Տնօրեն՝ Դ. Ավետիսյան
02.06.2020 թ.

Կարծիք

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտին որպես առաջատար կազմակերպություն, կարծիքի ներկայացված Ստեփան Ռուբենի Հասան-Ջալալյանի «Հասան-Ջալալյան իշխանական տոհմի դերը Հայոց պատմության մեջ XIII-XVI դարերում» ատենախոսության մասին:

Ներկայացված թեկնածուական ատենախոսությունը նվիրված է Հայոց զարգացած միջնադարի պատմագիտության մեջ ըստ կարելվույն ուսումնասիրված տարածաշրջանի և ժամանակաշրջանի պատմական գործընթացներում կարևորագույն դերակատարություն ստանձնած իշխանական տոհմի բազմաբովանդակ գործունեության գրեթե համապարփակ քննությանը:

Հայագիտության մեջ մնայուն ու գնահատելի տեղ են գրավել սույն թեմատիկային առնչվող բազմաթիվ մենագրություններ ու հոդվածներ: Արցախի պատմությունն իր արժանի արտացոլումն է գտել Հայաստանի ընդհանուր պատմության ակադեմիական հրապարակումներում: Հետազոտությունների բազմաքանակության հիմքում , անշուշտ, արցախական աշխարհի և նրա պատմության նկատմամբ ինչպես գիտական, այնպես էլ հանրային մեծ հետաքրքրության առկայությունն է, ըստ այդմ էլ երկրամասի պատմության հավաստի ու գիտականորեն հիմնավորված ուսումնասիրության կարևորության գիտակցումը: Խնդրին մեծապես նպաստել է նաև պատմության շարադրման համար անհրաժեշտ աղբյուրագիտական հենքի առկայությունը, ինչում հետազոտողների «բախտը բերել է»: Կարևոր տեղեկություններ են հաղորդում ժամանակի պատմիչները, ձեռագրերի հիշատակարանները և, իհարկե, հազարից ավելի բազմաբովանդակ վիմական արձանագրությունները: Այս սկզբնաղբյուրների շնորհիվ Արցախի, հատկապես զարգացած միջնադարի պատմական անցուդարձի, քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր ու մշակութային կյանքի առանձին նշանավոր անձանց տարաբնույթ գործունեությունը ստացել են բավական ճշմարտապատում և հիմնավոր լուսաբանումներ:

Ըստ այսմ՝ ևս մեկ, այն էլ ատենախոսական աշխատանքի ի հայտ գալը որոշակի հակասական տպավորություն թողեց: Նախ. ուրախալի է, որ չի մարել կամ նվազել հետաքրքրությունը Արցախի ու նրա պատմության կարևոր և ուշագրավ ժամանակաշրջանի պատմության նկատմամբ, ստեղծվել է երկրամասի ամենանշանավոր իշխանատոհմի մասին ամբողջական աշխատություն: Միաժամանակ առկա էր տարակույս՝ ինչով է պայմանավորված այս թեմայով աշխատանքի հրապարակումը, արդյոք այն պետք է դույզն ինչ լրացնի մեր գիտելիքները պատմագիտական գրվածքներում զայսօր առկա մի շարք իրադարձությունների, երևույթների, անձանց վերաբերյալ թերի արտացոլումների և պակասավոր մեկնաբանությունների, որոշ խնդրահարույց հարցերի հավաստի պատասխանները, որոնցով կհիմնավորվեր նշված թեմային նորօրյա անդրադարձը: Եթե սույն աշխատանքն իր ժամանակային ու բովանդակային ընդգրկումով դիտարկենք Արցախի պատմության գիտական հետազոտության ևս մեկ դրվագ, ապա, դատելով շարադրանքից՝ հեղինակին դա հիմնականում հաջողվել է: Սակայն այս գնահատականը տեղին կլիներ , եթե մեծահամբավ Հասան-Ջալալյանների մերօրյա ժառանգն իր աշխատությունը ներկայացներ որպես նախնիներին ձոնված հոգու տուրք և ընթերցողի սեղանին դներ մի գիտական ստեղծագործություն:

Սակայն իրադրությունն այլ է. հետազոտությունը ներկայացվել է որպես թեկնածուական ատենախոսություն, որի «ստեղծման» համար առաջադրվում են որոշակի պահանջներ, որոնք կարող էին մասամբ անտեսվել մեր նշած առաջին դեպքում: Տվյալ դեպքում, մեր կարծիքով, առաջնայինն ու կարևորը աշխատանքում «գիտական նորության» առկայությունն է, ինչը, հիմնականում պետք է արտահայտվեր նորահայտ սկզբնաղբյուրներով, դեպքերի, երևույթների նորովի լուսաբանումներով ու հավաստի մեկնաբանություններով: Ատենախոսության շարադրանքում այս ուղղությամբ մեր փնտրտուքը բավարարվածության առիթ չտվեց:

Աշխատանքի արդիականությունը հիմնավորելիս հեղինակը համեստ անդրադարձ է կատարում իր նախորդ հետազոտողների արածին: Պարզվում է, որ Հասան-Ջալալյանների գործունեությանը նախորդ ժամանակաշրջաններում «իր ամբողջության մեջ, դեռևս, լիարժեքորեն լուսաբանված և գնահատված չէ », նախորդներն ընդամենը «ինչ-ինչ անդրադարձներ են կատարել»: Այս «կարծիքը» գնահատում ենք անիրավացի, թեկուզ նկատառելով ատենախոսության տողատակերի հղումները և օգտագործված գրականության ցանկը, որում գրանցված է միայն բուն թեմային կամ դրա

բաղադրիչներին նվիրված 21 գիրք-ուսումնասիրություն և 16 հոդված: Այդ «ինչ-ինչ անդրադարձներ» կատարողներից Բ. Ուլուբաբյանի հանրահայտ գրքից ատենախոսության տողատակերում առկա է 70 հղում՝ ընդարձակ և համառոտ մեջբերումներով և հեղինակի տասնյակ մտքերի նորովի շարադրանքներով: Մենք անհրաժեշ չենք գտնում մանրամասն անդրադառնալ ատենախոսության «նպատակներին և խնդիրներին» քանզի դա էական դեր չի խաղում ատենախոսության գնահատականի ձևավորման համար, հատկապես, որ նախորդ հեղինակների մոտ դրանք այս կամ այն կերպ ստացել են իրենց, շատ հաճախ, առավել լիարժեք լուսաբանումները: Նույն նկատառմամբ չենք անդրադառնում նաև ատենախոսության բովանդակային քննությանը: Այդուհանդերձ, համառոտ անդրադառնանք հեղինակի առաջադրած «խնդիրներից» մի քանիսին : Առաջաբանում հեղինակի կողմից աղբյուրների և գրականության «մանրազննին համադիր քննությամբ փորձ է արվել լուծել» մի շարք խնդիրներ, որոնք կարելի է կարծել նախորդ հեղինակները զլացել էին «լուծել»: Արդ. ինչ խնդիրներ է դրել իր առջև ատենախոսության հեղինակը և լծվել դրանք լուծելու պատվաբեր գործին.

1. «Պարզել Հասան-Ջալալյան տոհմի ծագման հանգամանքները», այսինքն ՝ ծագումնաբանությանը: Այս խնդրով, տարբեր ընդգրկմամբ, զբաղվել են մեկ տասնյակից ավելի հեղինակներ՝ Եսայի Հասան-Ջալալյան, Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյան, Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանց, Ռաֆֆի, Հովսեփ Օրբելի, Ասատուր Մնացականյան, Բագրատ Ուլուբաբյան և այլք: Վերջինս խնդրի քննությանը նվիրել է 36 էջ: Նշյալ եկեղեցական ու գիտնական այրերը վաղուց «եզրակացրել են», որ Հասան-Ջալալ- Դոլան սերում է առանշահիկներից, ազգությամբ հայ է և նրա սերունդները պատմության մեջ հայտնի են մեծահամբավ նախնու անունով՝ Հասան-Ջալալյաններ:
2. Գրեթե նույն պատկերն է երկրորդ խնդրի «լուծումում»: Այստեղ հեղինակը փորձել է «լուսաբանել» Հասան-Ջալալ-Դոլայի բազմաբովանդակ գործունեությունը, ինչին տասնյակ էջեր են հատկացրել նախորդ հետազոտողները, առավել ամփոփ Բ. Ուլուբաբյանը՝ մոտ 40 էջ:
3. Ստեփան Հասան-Ջալալյանը որոշել է նաև ճշտել Հասանի գործունեության հետ կապված մի, ցայսօր վիճելի թվացող, փաստի իրողությունը՝ նա մասնակցե?լ է 1259-1261 թթ. մոնղոլների դեմ վրացիների ապստամբությանը և աղբյուրների քննությամբ պարզել, որ «չի մասնակցել» , ի տարբերություն Հ. Մանանդյանի, Լ.

Բաբայանի, Բ. Ուլուբաբյանի, Վ. Բալայանի և այլոց: Այսպիսին է հեղինակի ճշտման եզրակացությունը. «շատ քիչ է հավանական, որ Հասան-Ջալալ-Դոլայի նման հեռատես և ողջամիտ իշխանապետը կարող էր մասնակցություն ունենալ ապստամբությանը», առերևույթ փաստելով, որ ապստամբության մյուս մասնակիցները եղել են անհեռատես ու ոչ ողջամիտ (էջ 64-65):

Վերը շարադրվածը մեզ հնարավորություն է տալիս հավաստելու, որ Ստեփան Ռուբենի Հասան-Ջալալյանի «Հասան-Ջալալյան իշխանական տոհմի դերը Հայոց պատմության մեջ XIII-XVI դարերում» աշխատությունը որպես թեկնածուական ատենախոսություն՝ նյութի նախընթաց բավական լայնածավալ ուսումնասիրվածության, գիտական նորույթի անկատարության և դրանցով պայմանավորված թեմայի ոչ ճիշտ ընտրության պատճառով՝ չի համապատասխանում ատենախոսություններին առաջադրվող պահանջներին: Չնայած վերոնշյալին, հարկ ենք համարում փաստել, որ հեղինակը տիրապետում է ուսումնասիրության առարկային, հիմնականում օգտագործել է առկա մատենագիր ու վիմագիր սկզբնաղբյուրներն ու գրականությունը, շարադրանքում ներառել է Հասան-Ջալալին, նրա գործունեությանը ու տոհմին առնչվող իրողությունների մեծ մասը: Կարծում ենք, որ ուսումնասիրությունը մասնագիտական, լեզվառճական խմբագրական որոշակի միջամտությունից հետո կարելի հրատարակել գրքի ձևաչափով: Համոզված ենք, որ այն համեմված լինելով այսօրվա լեզվամտածողությամբ և պարունակելով պատմահայրենասիրական, նաև քաղաքական մեծ բաղադրիչներ՝ անշուշտ կարժանանա ընթերցողի ուշադրությանը:

Ատենախոսությունը քննարկվել է ինստիտուտի Միջնադարի հնագիտության և Վիմագրության բաժինների 2020 թ. մայիսի 27-ին կայացած համատեղ նիստում: Նիստին մասնակցում էին և ելույթ ունեցան պատմական գիտությունների թեկնածուներ Հ. Մելքոնյանը. Ն. Հակոբյանը, Ա. Ժամկոչյանը, Դ. Միրիջանյանը (միջնադարի հնագիտության բաժին), պատմական գիտությունների թեկնածուներ Գ. Սարգսյանը, Ա. Մանուչարյանը, Ա. Հարությունյանը, Հ. Հակոբյանը (Վիմագրության բաժին):

Միջնադարի հնագիտության բաժնի վարիչ,
պատմական գիտությունների թեկնածու՝ /Հ.Մելքոնյան

Վիմագրության բաժնի վարիչ, պատմական
գիտությունների թեկնածու՝ /Գ. Սարգսյան

02.06.2020 թ.

Ստորագրությունները հաստատում եմ
Ինստիտուտի փոխտնօրեն՝ /Ա. Բոբոխյան